




1. Թավշյա կարճ վերնագգեստ (կանանց համար) Ալեքսանդրապոլ, XIX դար




2. Մետեղնագործ բրդյա գոգնոց Ալջավազ, XIX դար



3. Գլխարկ արծաթե զարդերով (կանանց համար) Ախալցխա, XIX դար



4. Ոսկեթել գլխարկ, Ախալցխա, XIX դար



5. Բրդյա գուլպա, Վան XX դար



6. Բրդյա ասեղնագործ գուլպա, Կարս XIX դար

ԿՅԱՆՔԻ ԲԵՂՄՆԱՎՈՐ ՈՒ ՏԱՌԱՊԱԼԻՑ ՈՒՂԻ

Բ. Մելյան

Հայ ժողովրդի պատմության մեջ եղել են նշանավոր տոհմեր: Նրանցից մի քանիսը հայտնի են որպես բարեգործներ և իրենց միջոցներով պահել ու պահպանել են անգամ առանձին գյուղեր: Այսպես՝ Մելյան տոհմի ավագ սերնդից հայտնի է Մեսրոպ քահ. Մելյանը (Արամ), որ ծնվել է 1859 թ. ապրիլի 21 - ին, Պողոսքիւսայում (այժմ՝ Դիլիջան քաղաքի Շամախյան քաղամաս) ավագ քահ. Հովսեփի ընտանիքում:

Պատմագիտական աղբյուրների և ականատեսների վկայությամբ Մելյանները սերում են Արցախի Ջրաբերդի Մելիքների տոհմից, և 18 - յոդ դարի վերջերին նրանցից մի քանի ընտանիք տեղաշարժվել են ու հասել Տավուշ գետի հովիտը, նույնիսկ Վրաստան:

Մելյան ազգանունը քվում է, թե գոյացել է Մելիք անվան բարբառային արտասանությունից: Այդ ազգանունը պահպանված է Շամշադինում և հարակից գյուղերում:

Մեսրոպի հայրը՝ Հովսեփը (1835 - 1910), հոգևորական էր և մանկավարժ: Ներսես Ե կաթողիկոսի հանձնարարությամբ 1856 թ. Երևանում վերաբացել է թեմական դպրոցը և ինքն էլ ստանձնել է տեսչի ու հոգեբարձուի պաշտոնները: Մեսրոպը հոր մոտ է սովորում և խորանում հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմություն և այլ առարկաների գծով գիտելիքների ձեռքբերման մեջ:

1880 թ. Էջմիածնի սինոդի հրամանագրով Մեսրոպ Մելյանը նշանակվում է Երևանի հայոց կոնսիստորիայում որպես արտաքո շտաբի դիվանագետ ծառայող, ապա 1879 - 81 թթ. հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնում աշխատում է Երևանի Գալստյան օրիորդաց դպրոցում:

1886 - 90 թթ. իբրև ուսուցիչ աշխատել է Երևանի հայոց թեմական դպրոցում՝ դասավանդելով հայոց լեզու, ազգային ու ընդհանուր պատմություն առարկաները:

1890 թ. հուլիսի 29 - ի Մակար կաթողիկոսի # 305 կոնդակով կարգվում է Երևանի եկեղեցական - ծխական դպրոցների տեսուչ:

1893 թ. Սկրտիչ կաթողիկոս Խրիմյանի հրամանով նշանակվում է Վրաստանի և Իմերեթի (Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի նահանգների ու Գանձակ գավառի) ծխական դպրոցների տեսուչ:

1896 թ. ռուսական ցարի հրամանով փակվում են հայկական դպրոցները, և Մ. Մելյանը դուրս է մնում ուսուցչական անաշխատանքից: Բաթումի հայ հասարակայնության խնդրանքով Խրիմյանը 1897 թ. դեկտեմբերի 31 - ին նրան կարգում է մշտական ծխատեր հովիվ Բաթումի Ս. փրկիչ եկեղեցու տիրույթում: Այսպես՝ Մ. Մելյանը մերթ ազատվելով և մերթ նշանակվելով՝ այդ պաշտոնին է մնում մինչև 1924 թ.:

Հարկ ենք համարում նշել մի քանի կարևոր դրվագներ նրա մանկավարժական և հասարակական գործունեությունից:

1898 թ. Բաթումի արական գիմնազիայի հայոց լեզվի և կրոնի, 1903 - 1905 թթ. մեկնում է Կ. Պոլիս, ապա վերադառնում Բաթում, ուր նույն պաշտոնին մնում է 1917 թ.:

1916 - 17 թթ. կաթողիկոսի հանձնարարությամբ մեկնում է Տրապիզոն՝ տեղում եկեղեցական կալվածքների գրանցում կատարելու նպատակով:

Սկսած 1911 թ. մինչև 1921 թ. եղել է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Բաթումի մասնաճյուղի փարչության նախագահը:

Մ. Մելյանը մանկավարժական աշխատանքին զուգահեռ ծավալել է նաև գիտական - հասարակական գործունեություն՝ գրելով բազմաթիվ հոդվածներ, հաշվետվություններ, կազմել է նաև ծխական դպրոցների կանոնադրություն:

1904 թ. Արշակ Չոպանյանի հրավերով մեկնել Ֆրանսիա և տեղում մասնակցել եկեղեցական բարձրագույն ժողովին: Այս առիթով «Անահիտ» հանդեսում, Խառնուրի ստորագրությամբ հրապարակել է հոդվածաշար՝ եկեղեցու և պետության փոխհարաբերության մասին:

Իր կազմած մատենագիտության մեջ հիշվում է հետևյալը՝ «Թռուցիկ ցուցակ իմ գրական աշխատությունների՝ 1878 թ. մայիսից մինչև 1934 թ. փետրվարը»¹, որը ունի հետևյալ բաժինները՝ ըստ տպագրված աշխատությունների. «Հայոց մեծ վարդապետ Ս. Մեսրոպ» (Ե. 1882), «Հիսնամյակ

Երևանի Հայոց թեմական դպրանոցի

1837 - 1888 թ. (Թիֆլիս), «Քահանայական խնդրի շուրջ»: «Զննադատություն Արիստակես եպիսկոպոս Մեղրակյանի նույն անուն գրքի» (Թիֆլիս, 1901): Նշված է նաև շուրջ 150 գրքերի, վիպակների, թարգմանությունների, հոդվածների անուն, որոնք ժամանակին տպագրվել են մամուլում կամ մնացել ձեռագիր վիճակում:

Մ. Մելյանը աշխատակցել կամ թղթակցել է այդ ժամանակներում լույս տեսնող հայերեն և այլ լեզուներով շատ պարբերականների՝ Մշակ, Սուրհանդակ, Հորիզոն, Հովիտ, Անահիտ, Արմենիա, Բյուզանդիոն, Լուսա, Արշալույս, Արարատ, Պասկ, Համբավաբեր, Ժողովրդին Չայն, Հասկեր և այլն: Նա ստորագրել է Արամ Մելյան, Մեսրոպ Մելյան, օգտագործել է բազմաթիվ ծածկանուններ՝ Խատունի, Գիրգիտ, Նժդեհ, Դոն Եստևան, Դը Բարկաս, Մուրճ, Մետ, Աշխուժունի, Շահարցի և այլն: Թարգմանել է մեկ տասնյակ թատերգություններ եվրոպական դասական դրամատուրգներից, որոնք բեմադրվել են շատ խմբերի կողմից Բաթումի և այլ քաղաքներում...

Մ. Մելյան ղեկավարում կան նաև ուղեգրություններ, նոթեր, պատմվածքներ, հուշեր և այլն: Հետաքրքրական տեղեկություններ կան Խաչատուր Աբովյանի, Մեսրոպ Մելյանի մորական պապի՝ Հարություն Արարատյանի մասին: Դրանք քաղված են մոր վկայություններից, քանի որ նա այդ մեծերի ժամանակակիցն էր:

1922 - ին Բաթումում նրան կալանքի տակ վերցնում և տեղափոխում Թիֆլիս, Մետեխի բանտ: Ութ ամիս կրում է Վրաստանի չեկայի հալածանքները, բայց վերջապես ազատվում: Այստեղ էլ նրա անունը մտցվել էր հոգևորականների այն ցուցակի մեջ, որոնք համարվում էին անհնազանդ տարրեր:

Մտիպված գալիս է Երևան և խմբագրում «Ազատ եկեղեցի» հանդես, որը տպագրվում է 1924 - 28 թվականներին: Սրանով նա այդ ժամանակ փրկվում է սև ցուցակից: Նրան միաժամանակ նշանակել էին ՀԽՍՀ պետական կենտրոնական արխիվում որպես ղեկավար, ապա՝ փոխտնօրեն, և այդ պաշտոնում աշխատեց մինչև 1933 թ.՝ թոշակի անցնելը:

Մ. Մելյանի ղեկավարում պահպանվում են արժեքավոր նյութեր՝ Խ. Աբովյանի, Հարություն Արարատյանի, Մակար կաթողիկոսի, Մ. Սպանդարյանի, գարեգին Սրվանձտյանի, Հովհաննես Թումանյանի և այլ նշանավոր մարդկանց մասին, կան նաև բազմաթիվ լուսանկարներ:

Մ. Մելյանը ունեցել է հինգ զավակ՝ 2 տղա և 3 աղջիկ՝ Արմանուշ ծնվ. 1883թ. մարտի 12 - ին, Երևանում, Հրանտ՝ 1885 թ. հունվարի 1 - ին, Վաղարշապատում, Գոհարինե՝ 1893 հուլիսի 22 - ին, Արփինե՝ 1896թ. հուլիսի 1 - ին, Թիֆլիսում, Յուլակ՝ 1899 թ. 21 ապրիլի, Բաթումում: Բոլոր զավակները ստացել են բարձրագույն կրթություն Մոսկվայում, Պետերբուրգում: Նրանք էլ իրենց հերթին ծավալել են ազգօգուտ գործունեություն: Օրինակ՝ դերասանուհի Արփինե Մելյան - Կորկոտյանը թողել է մի շարք արժեքավոր տեղեկություններ հայ այն գրողների ու արվեստագետների մասին, ովքեր Եվրոպա մեկնելիս Բաթումում հանգրվանել են Մելյանների տանը:

1. Մ. Մելյանի ֆոնդ # 155:

2. Հայաստանի կոմկուսի արխիվ ֆոնդ # 1, ց. 4, գ. 10:

Արխիվային նյութերից

ԱՐԺԵԶԱՎՈՐ ՎԿԱՅԱԹՈՒՂԹ՝ ՀԱԿՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Մ. ՄԱՀԱԿՅԱՆ

1989 - ին «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի N 3 - ում Պ. Հ. Հովհաննիսյանը հրապարակել է Մաշտոցի անվան մատենադարանի արխիվային բաժնի՝ Հակոբ Մանանդյանի ֆոնդում պահպանված մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են պատմալեզվաբանական ֆակուլտետի 1920 թ. հուլիս - դեկտեմբեր ամիսների գործունեությանը: Հրապարակողը նյութի արժեքը անկարելի է գնահատել և համալսարանի հիմնադրման տարեթիվը (1919 թ. մայիսի 16, Ալեքսանդրապոլ) և ներկայացրել այն երախտավորներին՝ «որոնց տքնաջան, ազատությունը: Հատկապես գնահատելի են Հայաստանի հանրապետության Հանրային կրթության և Արտության նախարարներ Գ. Մելիք - Կարազյոզյանի, Ն. Աղբալյանի և Ղազարյանի, Համալսարանի ավետի ղեկավար, նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Պետառաքին ղեկավար, նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Պետառաքին պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Յու. Մ. Ղազարյանի (1850-1926) և այլոց ջանքերը, որոնց անմիջական մասնակցության շնորհիվ է, որ համալսարանը եղավ հիմնադրել Հայաստանի «դեմոկրատիկ համալսարանը» («Բանբեր Երևանի» պետական համալսարանի, N 3, էջ 79)

Հրապարակվել են մեկ զեկուցում և լեզվաբանական ֆակուլտետի 9 նիստերի արձանագրություն, որոնք ընդգրկում են գիտական ու կազմակերպական ամենատարբեր բնույթի հարցեր ու կատարված գործեր, ընդ որում սկզբից ևեթ կարմիր թելի պես ընդգծվում է, որ «Հայաստանի համալսարանը չնայած բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններին, գոյություն ունի, գործում էր և փորձում էր դառնալ ազգային մշակույթի ու հոգևոր կյանքի կազմակերպման կենտրոն» (նույն տեղում, էջ 80)՝ ունենալով գիտակրթական ու հայրենասիրական մեծ առաքելություն, որ այս էլ ավելի քան 8 տասնամյակ սիրով ու պատասխանատվությամբ առաջ է մղում Երևանի պետական համալսարանը:

Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկավար պաշտոնակատար Հակոբ Մանանդյանը 1920թ. ամառվա գործունեության մասին կազմած զեկուցման մեջ հանգամանորեն բնութագրում է, թե ինչ աշխատանք է տարվել առաջին կիսամյակի գիտատեսական աշխատանքների (դասախոսների հրապարակում, նոր առարկաների ծրագրերի կազմում, ուսանողների ընդունելության կատարում) և այդ շղթայում նաև գնման կամ գիտական հիմնարկների ու մասնավոր անձանց նվիրատվությունների միջոցով համալսարանի գրադարան գրքերով հարստացնելու ուղղությամբ:

Արխիվային նյութերը վկայում են, որ փիլիսոփա-բանագետ-երաժշտագետ Հակոբ Հարությունյանը 1920թ. ապրիլի 20-ին թվագրած դիմումով՝ ուղղված համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկան պրոֆեսոր գերապատիվ հայր Մեսրոպ եպիսկոպոս Մովսիսյանին, խնդրում է, որ իրեն ևս նկատի ունենալ փիլիսոփայական պոստականեր դասախոսի թեկնածուների շարքում: Պահանջվել են դիմումի բնագիրը, նաև ֆակուլտետի 1920թ. դեկտեմբերի 5-ի նիստի արձանագրությունը (տե՛ս նշվ. ամսագիրը, էջ 95 - 96), որտեղ նշված են նաև Հ. Հարությունյանի 8 ամիս առաջ հաշվառման մեջ վերցված դիմումի քննարկումն ու տրված հանձնարարականը:

Արձանագրված է՝ «Կնքագրվում է պ. Մ. Խոստիկյանի գրությունը, որ ինքը խնդրի է տված եղել փիլիսոփայության պատմության դասատուի պաշտոնի համար, բայց մինչև այժմ պատասխան չի ստացել: Կարողացվում է Հակոբ Հարությունյանի խնդիրը փիլիսոփայական առարկաների դասախոսի պաշտոնի համար: Մ. Տիգրանյանը հայտնում է որ Հ. Հարությունյանի գերմաներենի ղեկավարական շարադրանքը «Չարգասան գաղափարի փիլիսոփայական վերլուծությունը» ստացել է հեղինակից և հունիսին հանձնել պրոֆ. Ղազարյանին և խնդրել նրան որպես հնարվոր է շուտով կարգադրություն: Ֆակուլտետն ընդունում է, որ մեկ գիտական մասնագետի համար կարող են հրավիրվել աշխատելու և դասախոսելու մի քանի հոգի, և հաճախարարվում է դեկտեմբերի պաշտոնակատարին» և Մ. Տիգրանյանին քննել պ. Մ. Խոստիկյանի գիտական աշխատությունը, իսկ պ. պ. Ե. Տեր-Մինասյանին և Մ. Տիգրանյանին՝ պ. Հ. Հարությունյանի աշխատությունը և մինչև առաջիկա հունվարի 10-ը գրավոր զեկուցել ֆակուլտետին իրենց կարծիքը» (նույն տեղում):

Եվ քանի որ մեր սույն հրապարակումը մասնակի տեղեկություններ է տալիս Հ. Հարությունյանին դիմումում համալսարանական ուսումնառության մասին, ապա հարկ չենք համարում անդրադառնալ, թե երբ է դասախոսական աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում (1928-1941):